Մեծ մոնթերի փուովաոը,
Իրիկների ժամհարը,
Դան, հա դան, քե դուրբան,
Իմ ըրեխին ջան դուրբան:

3. Դան, դան, դան կանեմ,
Օրը մի շահի բան կանեմ,
Շահին կտամ շամամին,
Շամամն էլ կտամ իմ բալին:

324. 1. Հարի, հարի, խնոցի,
Մեջդ բարի, խնոցի,
Ունքդ կամար, խնոցի,
Մեջդ կարագ, խնոցի:
Ով որ ուտի էդ յուղիս,
Պոունկը բարակ, խնոցի:

2. Հարի, Հարի, խնոցի,
Մեջդ բարի, խնոցի,
Ունքդ բարակ, խնոցի,
Մեջդ կարագ, խնոցի:
Մեր խնոցին հիվանդ ա,
Էրկու խնչորի բանդ ա,
Հարի, հարի, խնոցի,
Մեջդ կարագ խնոցի:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳ

325. ՀՈՐՈՎԵԼ

Հորոլո, հորոլո,
Ջանիդ մեռնեմ, ա լոթի ջան,
Դուս էլար, դուս էլար,
Նվագը դուս ըլար, այ լոթի ջան.
Արի, արևիդ մեռնեմ, այ եկը ջան:
Թոլ արա ակները, թոլ արա,
Ջանիդ մեռնեմ, ա լոթի ջան,
Դուս էլար, դուս էլար, ա բալամ,
Նվագը դուս էլար, ա լոթի ջան,
Արի, ուսիդ մեռնեմ, ա եկը ջան, ա եկը.
Արի, լոթի-փոթի ջան, օ՜ օ՜,
Օրը լո, լա:
Արի գնանք, խոտ բերենք,
Արի՛, ա լոթի ջան,
Կովատեղա խոտը բերենք,
Ա լոթի ջան, այ ըմ,
Արևիդ մեռնեմ, ա լոթի ջան.
Հոլ արա, գնանք, հոլ,
Քոյիդ մեռնեմ, ա լոթի ջան,
Բերենք խոտը, ա բալամ, բերենք,
Ձմեռը որ ուտես, ա լոթի ջան:
Գնանք արտերը հնչենք, ա բալամ,
Հասել ա, հասել ա,
Գնանք, ա բալամ, արաը հնչենք
Ու բերենք կալսենք:
Ցորենն ու գարին ինչ ըլի,
Դարմանն ու խոտը քեզ ըլի,
Ա լոթի ջան, հո լո լո ըմ,
Այ ջանիդ մեռնեմ, ա լոթի,
Հո լոլո, լոլո, լո, հո լո:

326. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1. Հոգի ջան, ապնիվ հոգի,
Ինչպես մեկ գառն ես ինչ համար,
Ամառվա շվաք արա,
Ցինարի ծառն ես ինչ համար:
Հագուստդ խամ չիթ լինի,
Ալասիկ խաս ա ինչ համար,
Թե լինես վառման կրակ,
Ախպուրիկ սառն ես ինչ համար:
Քերանդ ոսկուց շինած,
Զուրխմի թաս ա ինչ համար:

2. Հարսը փեսին շնհավոր,
Ջան, շնհավոր, շնհավոր,
Փեշքեշ ենք տալի, շնհավոր,
Լավ կպահես, շնհավոր,
Խրատ կըտաս, շնհավոր,
Ջան, շնհավոր, շնհավոր:
Մեր հարսը շատ սիրուն ա,
Փեսի հետ մի բարշի ծերանա:
Հարսը փեսին շնհավոր,
Ծնհավոր, ջան, շնհավոր:

327. Մ՞խ, ադե ջան, ասանում ենք,
Հորն ու մորից հանում ենք:
Մ՞խ, ադե ջան, տանում ենք,
Տուն ու տեղից հանում ենք: